90. ՄԱՅԻՖ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Լըմ ա լըմ չի, մի թաքավոր ա լըմ, էս թաքավորը սաղ օխտը տարի ճուխտ աչքով մայիֆ ա լըմ։ Սա շատ մի ամեն տարի էլ չառ ա քաշըմ սաղ աշխարքին, թե ով որ իրան աչքերը պաց անի. իրան թաքավորութենի կեսը նրան կտա։ Ուրիշ թաքավորների ֆողի վրա ամեն ղոլն էլ մարթիկ ա ղարկըմ, որ ման կյան բալ-քի մի իլլաչ անեն, մի հսկացող մարթ քթնեն։ Համա իլլաչ չի լըմ։ էլ հեքիմ ասես, չառահ ասես, ամեն ղոլիցն էլ կյալիս են, լցվում են սրա տունը, տանչըմ ըն, տանչըմ, համա իլլաչ չի լըմ, կարըմ չեն պաց անեն։ Ոնց ա լըմ, ոնց չի լըմ՝ մի օր տեսնմ են բեսի մի դավրիշ շեր ասիլով ման ա կյալի։ Թաքավորը իրան վազիր-նա-ղիրին ասըմ ա. «Ինչքան չլի էլլհե դավրիշ ա, կարելի ա, որ դա մի պան մանա, քյնացեք պերեք»։

Սհանք քյնում են, հրցնում։ Դավրիշը ասըմ ա. «Էտ ծեր թա-քավորի աչքերը պաց լիլու դարմանը կա, թե որ կրանաք ծեռք պե-րեք,—ասըմ ա։ Ծովի միչին մի կարմիր, սիրուն ծյուկ կա, թե որ կրանաք նրան փոնեք, նրա արնիցը թաքավորի աչքերին քսեք, սհաթը պաց կլի»։ Սա ասըմ ա ու իրան ճամփեն ա քյնում։

Սրա քյնալուց ետը, թաքավորը իրան ֆողըմը ինչքան թոռչի կան՝ չիմնուն էլ կանչում ա ու հրամայում ա, որ կարմիր ծյուկը որտի որ ա ծովիցը հանեն պերեն, իրան տան, թե հու չէ,—ասըմ ա. «Չիմնուդ էլ ծովը կածեմ, կկտորեմ»։

Էս թոռչիքը թոռները վի են ունում ու քյնում ծովի ղրաղը, թաքավորը իրան տղին էլ հետերնուն դրած ա լըմ, որ պան ա, թե

որ կրացան էն կարմիր ծյունկը ծովիցը հանեն հա, սհաթը մորթի, արնիցը պերի, հոր աչքերին քսի, որ լվանա։

Թոռչիքը ծովումը էլ ծյունկը չեն հիլ անում, չիմ էլ բիրդան դուս են տալի ու դուս, համա կարմիր ծյունկը դեռ բեվում չի, վերչը ոնց ա լում, ոնց չի լում՝ մի թոռչի թոռը քցում ա, հանում ա։ Տենում են բեսի կարմիր ծյունկը ղորթ, որ դուս էկավ, ծյունկը՝ ի՞նչ ծյունկ, տունը չքանդվի, մարթ ասում ա ո՛նչ ուտեմ, ո՛նչ խմեմ, սրա սիրունութենին մտիկ անեմ։ Էնքան սիրուն, էնքան նախշուն ու չալտիկ-մալտիկ ա լում, որ մտիկ անողի խելքը քյնում ա։ Թաքավորի տղին կանչում են, ասում են. «Ծյունկը հանել ենք, արի մորթի»։

Սա կյալիս ա, որ ծկանը մտիկ չի անում՝ խելքահան ա լում, ասում ա. «Թեկուզ իմ հոր աչքերը մի տասը տարի էլ ավել քոռ մնա, ես էս ղայդի սիրուն ծկանը մորթիլ չեմ»։ Վեր ա ունում էլ ետ քցում ծովը, ու թոռչիներին էլ հրամայում ա, որ օչով պան չասի, ասում ա, թե. «Պան ա՝ հրցնող լի ասեցեք, թե՝ տանչվեցիք, տանչվեցիք ծովումը էլ ծուկ չմնաց, չիմ էլ դուս տվինք, համա կարմիր ծկան իղն ու թողն էլ չքթանք»։ Տհենց էլ շատերը կյալիս են ասում են, ով որ հրցնում ա, թե՝ ի՞նչ արիք։ Համա թաքուն կյալիս են թաքավորին խաբար են տալի, թե՝ բա սհե-սհե պան արավ քու տղան. «Ծյունկը փոնեցինք, տվինք, համա էլետ վե կալավ ծովը քցեց. ասեց. «Թե որ իմ հոր աչքերը տասը տարի էլ քոռ մնա. ես ղիմիշ չեմ անիլ էս ծկանը մորթելը»։

Թաքավորը շատ փիս կըղնվում ա, ասում ա. «Բաս իմ տղեն իմ դուշմանն ա լել, ես բեխաբար»։ Հրամայում ա, որ լհե էն սհաթը իրան տղին կախ անեն, խեղդեն։ Սրան պերում են լհե տարաղաշի կլխին կըղնըցնում են, որ թոկը ճիտը քցեն խեղդեն։ Թաքավորի նազիր-վեզիրնին ու մենծ-մենծ իշխան մարթիքը, խալխը կյալիս են թաքավորի ոտներն են ընկնում, ասում են. «Թաքավորն ապրած կենա, դու սոր կըզնված ես, սիրտդ վե կացած, ինչ ասես կանես։ Համա էքուց, որ սիրտդ վե նստի, արխեիննաս մեղ չիմնուս էլ կտորել կտաս, կասես. «Ասենք թե ես ի կըզնված, ա-րինը աչքերս կոխած, արածս հսկանըմ չէի, բա դուք ի՞նչ էիք ասում, որ ես իմ տղին կախ ի տալի»։ Մենք չիմս էլ էլով, խալխով քեզանից խնթրում ենք, որ քու տղին խեղդել չտաս, ընդիան դենը ինչ ղայդի ղազաբ անում ես՝ արա, մենք բաղի ենք. սուրդյուն ա-րա, աշխար-աշխար թող քյնա կորչի, պան ա, թե որ սիրտդ վեր նստի արածիցդ փոշմանես հա, կարող ես մեզանից ում ուզում ես հրամայես կքյնանք աշխարքը տակն ու վրա կանենք, էլետ

կրթեն, կպերեն քեզ կտանք։ Համ էլ թաքավորի տղա յա, դարաղաչ, էդ քու անբմիդ էլա ամոթ...»։

Թաքավորը սհանց խնդիրը լսում ա, հրամայում ա, որ տղին չխեղդեն. սուրդուն անեն, թող քյնա կորչի։ Էս տղին սուրգյուն են անում, սա վեր ա կենում ու քյնում։ Շատ ա քյնում, թե քիչ՝ էդ էլ աստած ա խարար, քյնում ա մի ծառի տակի նստում ա, որ դինջանա։ Հեն նոր նստած ա լում, մնել էդ ա մտիկ անում, տեսնում ա բեսը մի սիրուն բեքնակի զայդի սիրուն տղա էկավ իրան կշտին կաղնեց։ «Պարի աչողում, ասծու պարին» ասելուցը եդը էդ տղեն թաքավորի տղին հարցնում ասում ա, թե. «Ինչ մարթ ես, որդի ես բյնում»։ «Իմ հերը ինձ սուրգյուն ա արել. վեր եմ կացել, քյնում եմ, ես չեմ դիդում, թե որդի եմ քյնում. բա դու ինչ մարթ ես»,— հրցնում ա թաքավորի տղեն։

Սա ասում ա. «Ես էլ եմ սուրդյուն արած, ես չեմ գիդում, թե որդի եմ քյնում. դե որ տհենց ա, արի իրար հետ ախպեր դառնանք»։ Թաքավորի աղեն ասում ա. «Շատ լավ, արի դառնանք ու բյնանք»։

Թաքավորի տղեն էս նոր էկածից պուճուր ա լում, դրա համար էլ ինքը դառնում ա պուճուրը, նրան էլ ասում ա. «Դու էլ իմ մենձ ախպերն ես»։ Իրար խոսք են տալի, խոսք են առնում, որ մենձ ախպերը ինչ-որ ասի պուճուրը առանց ձեն-ծպտուն հանելու անկաչ դնի։ Էս պայմանը կապում են, պրծնում ու ճամփա ընկնում, շատն ու քիչն էլ աստած ա խարար։ Սհանք քյնում են, քյնում մի ուրիշ թաքավորի ֆոդում դուռ են կյալի. սհանք քյնալիս մի գեղի են ռաստ կյալի, մենձ ախպերը պուճուրին դարկում ա, ասում ա. «Քյնա՞ հլա մտիկ արա, տես թե մեզ լայաղ գեղ ա, քյնանք ըտեղ կենանք»։ Պուճուր ախպերը քյնում ա, տեսնում ա ու եետ ա կյալի ախպորը ասում ա. «Մի քյասիր գեղ աչ։ Սա ասում ա. «Էտ մեր կենալու տեղը չիչ։ Ասում ա ու էլեետ ճամփա են ընկնում։ Քյնում են, քյնում մի շհարի են ռաստ կյալի, մենձ ախպերը պուճուրին էլ եդ դարկում ա, ասում ա. «Քյնա՞ տես էդ ի՞նչ շհար աչ։ Պուճուր ախպերը շհարի դրադին ա հասնում թե չէ՝ քիչ ա մնում սրտաճաք լի, էլ եդ հիլ ա անում դպա ախպոր կուշտը մին ա վաղ տալի։ Ախպերը, որ սրան տհենց տեսնում ա, հրցընում ա, թե. «Էդ ի՞նչ ա, ի՞նչ խարար աչ։ Սա ասում ա. «Ախպեր ջա՞ն, արի ըստիան կլուխ առնենք կորչենք, որ մեզ ըստի կկոտորեն»։

— Խի՞ կկոտորեն, ախպե՞ր,—հրցընում ա։

Սա ասում ա. «Բա քյնացի հլա շհարը չմտած ղրաղիցը մտիկ

արի, տեհա շհարի մեչտեղը էնքան մարթի կլուխ կա կտրած, որ մենակ կլխներից մի մեծ բուրջ ա դառել. շհարի չորս ղոլն էլ մարթկերանց ջրմըտաքով հասար ա քաշած»։ Մենձ ախպերը ասըմ ա. «Վախիլ մի, մեզ ըտի օչով վնաս չի տալ, մենք ընտի լավ կապրենք, էդ հենց մեր տեղն ա, արի, քյնանք»։

Սհանք քյնում են շհարումը վեր են կյալի, մի դուքան են փոնըմ ու սկսըմ են առըտուր անիլ։ Սհանք ըստի էն ղայդի լավ առըտուր են անըմ, էն ղայդի լավ յոլա են քյնըմ խալխի հետ, որ սաղ շհարումը ինչքան խալխ կա՝ չիմն էլ սհանց վրա են թեքվըմ. էն մեկէլ առըտուրականնին առուտուրը շլիզ կտրըմ են։ Էս առըտուրականնին տեսնըմ են, որ իրանց հացը սհանք շլիզ կտրեցին, մի պանով էլա սհանց հախիցը կարըմ չեն վե կյան։ Քյնըմ են թաքավորին կյանկյատ են անըմ, թե. «Բա սհե-սհե էրկու ղարիպ տղա էկել են մեր շհարըմը սկսել են առըտուր անել ու մեր հացը կտրել են, էլ մեր կուշտը մի մուշտարի էլա կյալիս չի. չիմն էլ նհանցից են առըտուր անըմ. խնթրում ենք, որ նհանց յա մեր շհարիցը դուս անես, դյա թե չէ՝ ղազար անես, որ մեզ վնաս չտան, սհենցութինով մենք կարալ չենք յոլա քյնալ»։

Թաքավորը էս որ մանըմ ա, ասըմ ա. «Ջունքի դուք տհենց լավ տղեք եք, լավ յոլա քյնալ գիտեք խալխի հետ, ես ձեզ ինձ մոտ տեմ պահել»։ Ասըմ ա ու մենձ ախպորը վազիրութին ա տալիս, պուճուրին՝ վաքիլութին։ Սհանք թաքավորի խոսքիցը դուս չեն կյալի, իրանց առըտուրը վերչացնըմ են ու վազիր-նազիրութին անըմ։ Սհենց շատ են կենըմ, թե քիչ, սհանք իրանց քաղծր անուշ ժամ կյալովը, հա՛մ իրան թաքավորին, հա՛մ էլ սաղ շհարցոց սիրելի են դառնըմ։

Մի օր՝էլ էս մենձ ախպերը քյնում ա թաքավորի կուշտը ու ասըմ ա. «Թաքավորն ապրած կենա, քեզանից մի խնթիրք ունեմ»։ Թաքավորն ասըմ ա. «Ինչ որ խնթրես՝ չէ չեմ ասիլ»։ Սա ասըմ ա. «Ես քեզանից մի տան տեղ եմ ուզում, ուզում եմ ինձ համա տուն շինեմ, տեղ շինեմ, տուն դառնամ, որ ետով էլ փսակվեմ»։

Թաքավորը շհանց ա տալի, ասըմ ա. «Քյնացեք փլան տեղը քյասիր-քյուսիբնի կա, նհանց դուս արեք, խռիկ տվեք ու սհանց տան տեղը ինչ ուզում եք շինեցեք»։ Սհանք թաքավորին ասըմ են. «Թաքավորն ապրած կենա, մենք ուզում ենք տուն շինենք, չենք ուզում տուն քանդել, քյասիրներին դուս անել իրանց տնից»։ Թաքավորն ասըմ ա. «Դե որ տհենց ա հա, քյնացեք փլան տեղը մի դարտակ տեղ կա՝ վե կալեք, ինչ ուզում եք շինեցեք»։

Սհանք քյնըմ են թաքավորի շհանց տված տեղը շհարի ջլիզ դրադին մի լավ ըմարաթ են շինըմ ու միջըմը կենըմ են։ Մի օր մենձ ախպերը ասըմ ա պուճուրին. «Ես քյնըմ եմ թաքավորի կուշտը, դու էլ քյնա՛ շհարը ման արի, էրկու քյանքյաչի քթի պի, ման դաքին քառասուն սաչին խոր մի ֆոր քանդել տուր, վրեն մի դուռ շինել տուր ու պլանիքով պինդ փակիր, հազիր արա»։ Էս պուճուր ախպերը քյնըմ ա քյանքյանչիքը պերըմ ա, ֆորը քանդել ա տալի, դուռն էլ վրեն ա անըմ, հազրըմ։ Ըիկունը ախպերը կյալիս ա, հրցնըմ ա. «Հը՞, ի՞նչ արիր, հազիր ա, թե չէ»։ Սա ասըմ ա. «Հազիր ա»։

Սա քյնըմ ա, տենըմ ա ու եդ կյալի ախպորը ասըմ ա. «Էքուց էլ կքյնաս սաղ շհարը ման կկյաս, որտիան որ ա ինձ համար մի Դուդի դուշ կճարես, հախը ինչ էլ որ ասեն՝ կտաս ու կպերես»։

Էքսի օրը ինքը էլեդ քյնըմ ա թաքավորի կուշտը, ախպերն էլ ընկնըմ ա շհարը Դուդի ղշի ա ման կյալի։ Շատ ա ման կյալի, թե բիչ, քյնըմ ա մի հաչու կշտին քթնըմ ա, ասըմ ա. «Հաչի՞, ղշիդ ի՞նչ տամ»։

Սա ասըմ ա. «Իմ ղուշը անկլին ա, ես ծախել չէի, համա էն ա, որ ծերացել եմ, տտից-ծեռից ընկել եմ, էլ կարըմ չեմ ման կյալ, դրա համար կծախեմ քեզ ինը հարիր մանեթով»։

Սա սհաթը փողը հանըմ ա տալի, ղուշը վեր ա ունում պերըմ տուն։ Ըիկունը մենձ ախպերը կյալիս ա հրցնըմ ա. «Հը՞, ի՞նչ արիր, ղուշը քթա՞ր, առա՞ր, թե չէ»։ Պուճուր ախպերը ասըմ ա. «Հա՛, առա, բեսի»։

Էքսի օրը մենձ ախպերը պուճուր ախպորը ասըմ ա. «Ես էս ղշի հետ մտնել տեմ քու քանդած ֆորը, քառասուն օր, քառասուն քշեր ընտեղ կենալ տեմ, քառասուն օրից ետը ֆորի դուռը պա՛ց կանես ու ծեն կտաս, թե սաղ կլեմ՝ հու էն ա դուս կքաշես, թե հու չէ՝ մնռած կլեմ. էլ ձեռ չտաս։ Վերևից ֆողը վրա տուր ֆորը լցրու ու ծածկի. նտով խալխին կասես, որ ախպորս թաղեցի։ Հեչկել քառասուն օրը թաքավորը կյա՛, ուրիշ օքմի, թե ինձ տեղակ տվող լի հա՛, կասես, թե հիվանդ, տանը խտոր ընկած եմ։ Օքմու պա՛ն չասես, թե ֆորումն եմ»։

Տհենց ախպորը թամբահ անելուցը եդը, Դուդի ղուշը վի ա ունում հետն էլ քառասուն ջուխտ բատամի միշուկ, մտնըմ ա ֆորը ախպորն էլ ասըմ ա. «Դուռը վրես պինդ փակի»։ Դա էլ դուռը վրեն պինդ փակում ա ու քյնըմ իրան պա՛նին։

Մի օր, էրկու օր, էս թաքավորը, խալխը տենըմ են, որ իրանց

վազիրը չի բռում, չի կյալիս, էն ախպորը հրցնըմ են, սա էլ ասըմ ա. «Հիվանդ տանը խտոր ընկյած ա»։ Տհանք էլ հվատըմ են։

Սրանից եդը, անց ա կենըմ, մի օր, հինգ-տասը օր էս թարա-վորը, խալխը քանի ախպորը հրցնըմ են, սա խափում ա, թէ ախպերս հիվանդ ա։

Սհենց խափելով, խափելով կյալիս ա քառասուն օրը թամ-ում ա։ Էս պուճուր ախպերը, ոնց որ թամբահ էր արել մենձ ախ-պերը, քյնում ա ֆորի դուռը պաց ա անըմ ու ծեն ա տալի, ասըմ ա. «Հը՞, ախպեր, սաղ ե՞ս»։ Տենըմ ա ախպերը զոռով-զոռով հանիրը կտրած ասեց. «Հա՛, սաղ եմ տուս քաշի»։

Սա պիրում ա քյանդիրը կախ ա անըմ, ախպերը մեչքիցը կապում ա, տուս ա քաշըմ։ Ախպոր էրեսին ու Տուտի ղշին որ մտիկ չի անըմ, վախլութենիցը քիչ ա մնըմ սրտաճաք լի. թե՛ ախ-պերը, թե՛ ղուշը նհենց դառած են լըմ, նհենց դառած, որ ասենք, թե մի էրկու սհաթ էլ ետի էր ախպերը հասել, էնա ֆուքին տված պրծած կլեր։ Մի խոսքով էն ղայդի էր լղարել ու չորացել, որ թե որ քնթիցը փռնեիր՝ սհաթը ֆուքին դուս կկյար, նհենց էլ ղուշը։

Սա պերում ա ծեռաց ախպորը տանըմ ա համամ, լավ-լաղա-թին լղրցնըմ ա, շորերը չիմ էլ ոտիցը հշկել կլյուխը փոխում ա։ Լավ-լաղաթին կշտացնըմ ա, ախպերը մի քիչ խելքի ա կյալի, տան միշին, ղշին էլ լավ մղոյիթ ա կենըմ, սա էլա կամաց-կա-մաց վրա կյալի։ Սհանք ֆորիցը դուս կյալուցը ետը, դեռ հլա էրկու շաբաթ անց կացած չի լըմ, էս տղեն հենց վրա ա կյալի, հենց լավանըմ ա, որ էլեդ առաչվան նման ա դառնըմ։ Լվանա-լուցը ետը, սա մի օր վի ա կենըմ քյնում թաքավորին տեսութին։ Թաքավորը սրան տենալուն հատաղ շատ ուրախանըմ ա հարց-նըմ ա. «Քե՞փրդ, հա՞լրդ, ինչի՞ հիվանդացար, ո՞նց լավ, ո՞նց չլավ»։ Ետով էլ էս տղեն խոսք ա քցում ու թաքավորին ասըմ ա. «Ես քու կուշտը մի խնթիրքի եմ եկել»։

Թաքավորը ասըմ ա. «Ասա՛, ինչ որ բերնիցդ դուս էկավ՝ «չէ» ասել չկա, սհաթը կկատարեմ»։ Սա ասըմ ա. «Թաքավորն ապրած կենա, ես էկել եմ խնթրեմ, որ քու աղջիկը իմ ախպորը տաս»։

Թաքավորն էս որ մանըմ ա, հա ասըմ ա. «Վո՛ւ ա՛հսուս, հա-զար ափսուս քու իդիթութենիդ, ես քե մի խելոք տղա գիտեի, չէի գիտըմ, որ դու էդ ղայդի խակ բան կփռնեսս»։ Էս տղեն հրցնըմ ա. «Խի ես տհենց ասըմ, թաքավորն ապրած կենա»։

Թաքավորն ասըմ ա. «Բա տու էսքան վախտ ա ըստի էս, չես ի-

մացել, թե իմ աղջիկը ի՞նչ զայդի անդգամը, ի՞նչ զայդի լայրն ա, որ էկել ես խնթրում ես քու ախպոր համար։ Բա էսքան վախար դու մեր շահարի մեյդանումը կեցած մարթի կլխներից սարը տեհել չե՞ս, բա դու մեր շահարի հասարը տեհել չե՞ս, որ չիս մարթի ջամտարով ա հասար քաշած, էտ զատամը չիմ իմ աղջկա սպանած մարթկերանց կլուխն ու ջամտաքնին ա, ով որ էկել ա, ուղեցել ա, թե իմ աղջկանը ատնի, իմ աղջիկը ասել ա. «Ինձ ուզողը, թե նրցով ինձ խոսցնի՝ հու էնա կառնեմ նրան, թե հու չէ՝ սհաթը կլուխը կթրցնեմ»։ Էդ զատամ կլխնին ու ջամտաքնին, որ տեսնում ես, չիմ էլ էկել են՝ տանջել են, տանջել, որ խոսացնին իմ աղջկանը, կրացել չեն՝ կլխներուն կտրել ա տվել, քցել մեյդանը. ամամարներուն էլ հասար ա բաշել։ Ես քե շատ եմ ափսոսում. արի դու բու չանին հացիդ արի, ետ կաղնի, էդ պանը ինձանից մի խնթրիլ, ինչ ուզում ես խնթրիր՝ «չէ» չեմ ասիլ»։

Էս ալեն ասում ա. «Թարավորն ապրած կենա, ես էդ պանիցը ետ բաշվողը չեմ. բեղանից խնթրում եմ, որ դու քո զուլիցը իրավունք տաս, թե՝ դարբել եմ, ընդիան դենը ես դիտեմ, վնաս չունի, թե հրմի կարամ բու աղջկանը խոսացնիլ հու էնա, ախպորս կուզեմ, թե հու չէ՝ վնաս չունի, Թող իմ կլուխս էլ հալալ բլի բու աղջկա թրին, ես էլ շատերից մինը, Թող կլուխս կտրել տա»։

Թարավորն ասում ա. «Դու դիտես, աստած քեզ հետ, քյնա, ես դարում եմ, թե կրացիր խոսրցրիր աղջկանս՝ հու էնա լավ, թե հու չէ՝ ես իմ մեղրիցը դուս եմ կյալի»։

Էս ալեն վեր ա կենում Տուտի զուշը տնում ա կոնըտակին ու բյնում ա Թարավորի աղջկա ըմարաթի դռանը կաղնում ա։ Խարարը հառնում ա Թարավորի աղջկա անկաջը, ասում են. «Բա՛ սհե-սհե, բու հոր վայիրը էկել ա քե իրա ախպոր համար ուզում ա»։ Էս աղջիկը ասում ա. «Թող կյա՛, ֆոզեմ դրա կլուխը, հորս հացը հալրաթ փորին ծանդրութին ա անում, հալրաթ կլուխը ցավում ա, ացալը մոտացել ա», ասում ա ու օթախի մեջտեղիցը մի փարտով կտրում ա, ինքը փարտու քմակին նստում ա ու մի մում էլ շամդանով կոցնում ա անում դուս դոլլեն ստոլի վրա ու ճանիա ա պահում։ Քյընում են տղին ասում են. «Համեցե՛ք, արի»։

Էս տղեն նի ա մտնում օթախը, մտիկ ա անում, տեսնում մումը շամդանով դրած ստոլի վրա վառվում ա, օթախը փարտով կտրած, էլ օչով չկա, դես ա մտիկ անում, դեն, Տուտի զուշը վեր ա Թողում՝ բյնում ա շամդանի տակնուց մտնում, ետով սա ասում ա. «Բարի իրիկուն բե, շամդան ախպեր»։ Տուտի զուշը շամդանի

տակից ասում ա. «Ա՛յ ասծու բարին, քե վազիր ախպեր, համեցե՛ք, համեցեք նստի մի քիչ գյաւփ անենք. մեր տունը-տեղը քե փեշքեշ ա, կյալդ պարի, հազար տարի, հազար պարի լի, ո՞նց ես, ո՞նց չես»։

Էս աղչիկը, որ էստունք մանում չի՞, թուքը ցմաքում ա, մնում ա սառած կաղնած, ասում ա. «Ախպե՛ր, էս իմ շամդանը խոսար ա մացել, ես էսքան վախտ գիդանալիս չեմ ըլել»։ Ասում ա. «Հալա տենամ ի՞նչ գյաւփ տեն անիլ»։

Էս վազիրը քյնում ա շամդանի կողքին նստում ա։ Շամդանը ասում ա. «Վազիր ախպեր, գյաւփ արա տենանք, ի՞նչ կա, ի՞նչ չկա»։ Էս վազիրը ասում ա. «Առաչ տու սկսիր, շամդան ախպեր»։

«Մի դուլգյար մարթ ա լում, մի դերձիկ, մնել մի տերտեր. էս իրեքն էլ քյնացած են լում զարիրութին՝ աշխատանք անելու, սրանք զարիբութենումը շատ են կենում, թե քիչ՝ լավ աշխատելուց ետը, ետ են դառնում, թե կյան փրանց տունը։ Ճանփին կյալիս են, կյալիս մի խոր ըրանաց մութը քոլում մթնում ա։ Սհանք ըստի կրակ են անում, որ քշերը ըստի քնեն լիսացնեն, ռավոտը էլետ ճանփա ընկնեն՝ քյնան։ Քշերը քնելիս իրար հետ խոսքը մին են անում, որ տհանցից մինը սհաթով հերթով-հերթով ղրավուլ կենա, էրկուսը քնեն, ետով սհաթը թմամելուց ետը հնկերին վեր կցնի, որ ղրավուլ կենա, ինքը քնի։ Տհենց էլ անում են, չիմնուց ծերքին ղրավուլութինն ընկնում ա էս դուլգյարին. սա ղրավուլ ա կենում, տերտերն ու դերձիկը քնում են։ Էս դուլգյարը, որ տենում ա քունը տանում ա, կարում չի զարթուն կենա հա, մի փետ ա վե ունում ու սկսում ա մարթի պատկերի ղայդի տաշել, տհենց տաշում ա, թամամ փետից մարթի պատկեր ա շինում։ Վախտը թմամելուց ետը դերձիկին վերկցնում ա, քնում ա։ Էս դերձիկը վեր կենում, մտիկ ա անում, տենում, էս դուլգյարը իրան շնորքը շհանց ա տվել. իրան քունն էլ տանելիս ա լում, սա էլ վի ա ունում իրան շնորհքն ա շհանց տալի՝ փետի մարթին մի էն ղայդի լավ ձեռք շոր ա կտրում հքցնում, որ տենողը կմնար ըրմացած։ Սրա սհաթն էլ թմամելուցը ետը սա քյնում ու տերտերին վեր ա կցնում, ինքը խտոր ա ընկնում, քնում։ Էս տերտերը վեր ա կենում, մտիկ ա անում, տենում բեսի մի ոքմի կշտին կաղնած, սա ծեն ա տալի. «Ո՞վ ես, ի՞նչ մարթ ես, ուշար չե՞ս»։ Սա քյնում ա վախվախելով, էս ոքմնին որ ձեռ չի տալիս, սա հա վե ա ընկնում, էս տերտերը նոր ա կլխի ընկնում, որ էս իրան ընկերները ամեքը իրան հյունարը շհանց են տվել։ Ասում ա. «Ես էլ իմ հյունարը շհանց տամ»։

Ասում ա ու Լրևսը թևքում ա դպա աղոթրանին, շոքում ա, աղոթք ա անում, նհենց ա սրտով, լաց լիլով աղոթք անում, որ ետ ա մտիկ անում, տենում՝ բեսի էն փետի մարթը աստծու հրամանով շունչ առավ, Լկավ կողքին նստեց։

Ռավստը լիսանալուցը ետը, էս դուլգյարն ու տերտերը վեր են կենում, տենում բեսի մի կնիկարմատ կողքներնուն նստած, սհանք ծնոաց հսկանում են, թե պանը ինչումն ա. տեսնում են տերտերն էլ իրան շնորքն ա շհանց տվել։ Էս կնկանը սհանք սկսում են ամենքը իրանց վրա քաշել, դուլգյարն ասում ա. «Ինձ կհասնի, ես որ փնտից չշինեի որդիա՞ն կլիներ»։ Դերձիկն էլ ասում ա. «Ես որ շորները չկարեի, որդիա՞ն մարթի նման կլեր»։ Տերտերն էլ ասում ա. «Ի՞նձ կհասնի, ես որ ֆուքի չտայի, ի՞նչի պետքն էր»։ Սհանք տհենց կռիվ են քցում, վերջը կարում չեն մի պան անի. նա ասում ա՝ ինձ կհասնի, նա ասում ա՝ ինձ կհասնի, հմի քեզ եմ հրցնում, վազիր ախպեր, տու ասա՝ էդ իրեքիցը որի՞ն կհասնի էն կնիկը»։

Վազիրը ասում ա. «Դուլգյարին կհասներ, նա ա առաջի շինողը»։

Շամդանը ասում ա. «Չէ՛, վազիր ախպեր, դերձիկին կհասնեը, նա շորեր կարեց հաքցրեց, մարթի նմանցրրեց»։

Սհանք ըստի տհենց, նա ասում ա՝ դերձիկին կհասնի, նա ասում ա՝ դուլգյարին կհասնի, տհենց կախ են քցում էս աղջկա սիրտը, փարդի տակին քիչ ա մնում, թե ճաքի կրզնվելուցը։ Որ շատ սհանք տհենց իրար հետ չանա են թակում հա՛, սա էլ կարում չի, թե համփերի, փարտու տակիցը բղավում ա. «Տո՛ ախմախնի, ի՞նչ եք դարտակ-դարտակ դավի տալի, էն կնիկը տերտերին կհասնի, ֆուքի տվողը նա էր»։ Վազիրը էս որ մանում ա, ասում ա. «Դե՛, որ նա տերտերին կհասնի, դու էլ իմ ախպորը կհասնես»։ Ասում ա. «Ա՛յ խալխեր, դուք էլ վկա լեք, որ թաքավորի աղջկանը խոսացրի»։

Ասում ա ու Տուտի ղուշին թաքուն թրցընում ա տնում կռնը-տակին ու էլետ տուս կյալի քյնում իրան տուն։

Տրա քյնալուցը ետը էս աղջիկը փարտեն ետ ա քաշում, կյալիս ա շամդանի կողքին կաղնում ա ու ասում. «Բարի իրիկուն քե, շամդան ախպեր»։

Շամդանը ծեն-ծպտուն չի հանում, մնել ա ասում, մնել, որ տենում ա շամդանը խոսում չի, սա վե ա ունում քարերովն ա տալի՝ կոտրատում, փշրում ու դեն ա ածում։ Խաբար էլ դարկում ա էն տղի վրա, թե դրան դարուլ չեմ. մնէլ արի խոսացրու։ Էս անգամն էլ

խսրցրիր հու էնա քու ախպորը կուզեմ, թե հու չէ՝ կլուխտ կկտրեմ։ Էս տղեն մարթ ա զարկում, թե լավ՝ նի կկյամ։ Էքսի օրը էլ ետ էս տղեն Տուտի ղուշը վի ա ունըմ ու քյնըմ թաքավորի աղչկա տուն։ Սա տուն ա մտնըմ, տեսնըմ ա էլեդ առաչուց ղայդի փարդեն օթախի կիսիցը քաշած, ստոլը տրած իրան տեղը շամդանը չկա։ Սա դես ու դեն մտիկ ա անըմ ու Տուտի ղուշը թաքուն քցըմ ա ստոլի տակը, ետով ասըմ ա. «Բարի իրիկուն քե՛, ստոլ ախպեր»։ Էս Տուտի ղուշը ստոլի տակիցը ասըմ ա. «Ա՛յ ասծու պարին քե, վազիր ախպեր, դալդ բարի լինի, քե՞ֆդ, հա՞լդ, ահվա՞լդ, ո՞նց էս, ո՞նց չես, նստի մի քիչ գյափ անենք»։

Վազիրը ստոլի կողքին նստում ա ու ասըմ ա. «Դե գյափ արա տեսնամ, ի՞նչ ես անըմ, ստոլ ախպեր»։ Ստոլը ասըմ ա. «Վազիր ախպեր, ես վախում եմ գյափը ես կսկսեմ, համա էրեդ ըրիգունվուց շամդան ախպոր օյինը կլխիս կկյա, խնթրում եմ դու էս ըրդու գյափ արա»։

Վազիրը ասըմ ա. «Լա՛վ, ստոլ ախպեր, ես կասեմ»։ Ասըմ ա. «Ստոլ ախպեր, լըմ ա չի լըմ, էրկու ախպեր են լըմ, մենձ ախպերը՝ պսակված, տանը տաշտըմը ա կյալիս լըմ, պուճուր ախպերն էլ սարըմ ա լըմ՝ իրանց ոչխարի տավարի վրա։ Էս մենձ ախպերը ղադմի ամեն օր ախպոր դարդը քաշելիս ա լըմ, ասըմ ա. «Ցարաբ, իմ խեղճ ախպերը էն սարերի կլխին ո՞նց ա յոլա քյնըմ, ո՞նց չի քյնըմ։ Ցարաբ խորակի, եմիշի, մրքի էրես տեսնըմ ա, թե ամեն օր ցամաք հացը կրծելով, ոտները պոպիկ ման ա կյալի, յարաբ կլխին, ոտին շորի կտոր կա, թե տկլոր ա ման կյալի»։

Պուճուր ախպերն էլ սարի կլխին տաշտի ախպոր դարդն ա քաշըմ, ասըմ ա. «Ցարաբ իմ ախպերը, իրան նշանածը ո՞նց են յոլա քյնըմ, ո՞նց չեն քյնըմ։ Ես ըստի եմ սարի սառը ջրերը խմելով, շվաք տեղերը, հովհով սարերը ման կյալի, յարաբ շոքումը ո՞նց են»։ Շատ միտք անելով էդ մի օր վեր ա կենըմ ասըմ ա. «Քյնամ իմ ախպորը վե կալնեմ հետս պերեմ մի քանի օր էլա ըստի կշտիս պահեմ, էս սառը ճրիցը մի բոլ-բոլ էլա խմացնեմ, սրտիս դարդ չմնա. մեռնել կա, ապրել կա, ո՞վ ա գիտում էքուց-էլօր կլխիս ի՞նչ կկյա»։ Սա սհենց ասըմ ա ու քյնում ախպորն ու հարսին վե ա ունըմ, թե տանի սարը իրանց բինեն։ Ճանփին ստընականի պես սհանց ղաչաղնի են ռաստ կյալի, ուզում են սհանց թլանեն, հարսին էլ ձեռներուցը խլեն։ Էս էրկու ախպերը սհանց մոտ չեն թողնում, էրկու ղոլիցն էլ սկսում են կախ քցել։ Վերջն էլ ղաչաղնին էս էրկու ախպոր գլուխն էլ կտրում են ու թլանում, էդ հարսին

Էլ ման են կյալի, թե քթնեն, քթնըմ չեն։ Դու մի ասիլ՝ սա կովի էս թոնդ վախար փախչում ա, մտնում մի ծառի փչակի մեջ՝ տապ անրմ։ Ղաշաղնին, որ տեղրմ են՝ քթնըմ չեն էդ հարսին հա՛, հիչ են անրմ բյնըմ իրանց սյանին։ Սհանց քյնալուցը եդը էս հարսը ստիկ ա անրմ, աննրմ բեսի էրկու եղունիկ թռան էկան իրանց մոտիկ մի ծառի վրա վեր էկան ու ամենքը մի բմբուլ իրանց թև-վիցը վե բցեցին. սա մի քիչ ննջում ա, էրազըմը կյալիս են սրան ասրմ են. «Քյնա՛, էն թևիցը վե կալ ու քու էդ տապ արած ծառի տակում կշտին ասիին քսի, էնդի մի ախպուր տուս կկյա՛, էդ թևերը վե կունես, որի միջին թաց կանես ու կքսես կտրած կլխներին ու ջամդարներին ու իրարից կմոտացնես, սհաթը կկպչեն քու մարմին ու տերրդ կսաղանան, վե կկենան»։ Էս հարսը զարթնըմ ա թե չէ՝ բյնում ա էն թևերը վեր ա կալնըմ, պերըմ էն ծառի տակուցը մոտիկ տափին ա քսըմ թե չէ, մնէլ տեսնըմ ա բեսի մի ախպուր ա տուս բցում. սա էս ախպրի միչին էդ թեպուրը թրչում ու տանրմ տ բսրմ կտրած կլխներին ու ջամտաքներին։ Ետով կլխնեբը տնրմ ա ջամաարների վրա թե չէ՝ մին էլ տեսնըմ ա, զորթ որ. Լրտպի ասածի դայդի բեսի մարթն էլ տեքրն էլ սղացան վե կացան։ Հմի կասես դու արի ըստի տես, որ էդ հարսը կտրած կլխնին ջամդարներեն կպցնելիս սխալվել ա, իրան մարթի կլուխը կպցրել ա տերոր ջամդարի վրա, տերոր կլուխը՝ մարթի ջամդաքի վրա։ Էս մարթը սղանալուց, վեր կենալուց եդր մտիկ ա անրմ, տեսնրմ մնի կլուխը մնի վրա, մնինը՝ մնի վրա. սկսում են էս հարսի համար իրար հետ կռիվ քցել։ Իրան հալալ մարթի կլուխը ասրմ ա. «Իմ կնիկն ա»։ Ջամդարն էլ էն զոլիցը ասրմ ա. «Չէ՛, իմ կնիկն ա»։ Ըստի էս էրկու ախպերը սկսում են կռվել, քիչ ա մնում իրար սատն, կատրեն։ Հմի դու ասա ախպեր էն հարսը ո՞րին կհասներ՝ կլխի՞ն, թե ջամդարի՞ն։

Ստոյը ասրմ ա. «Հալբաթը կլխին կհասնի»։ Վաղիրը ասրմ ա. «Չէ՛, ջամդարին կհասնի. կլուխը առանց ջամդաքի ի՞նչի պետքն ա»։ Ստոյը ասրմ ա. «Չէ՛, վաղիր ախպեր, ջամդաքը ոանց կլխի ընչի պետք, կլխին կհասնի»։

Սհանը բսրի նա ասրմ ա՝ ջամդաքին կհասնի, նա ասրմ ա՝ կլխին, էս աղջկա սիրտը փարդու տակին քիչ ա մնըմ, թե տրաքի։ Որ շատ համբերութին հասնրմ ա, փարդու տակիցը բղավում ա. «Ի՞նչ եր սարսաղ-սարսաղ կռիվ տալի, հալբաթքի կլխին կհասներ էն հարսը, կլուխը որ չի, ջամդաքը ինչի՞ ա պետքը»։

Վաղիրին էլ էս էր հրկավոր, ասրմ ա. «Թաքավորի աղջիկ.

թե որ էն հարսը կլխին կհասնի, դու էլ իմ ախպորը կհասնես»։ Ասում ա. «Խա՜լխ, դուք էլ վկա լեք, որ խոսացրի»։ Ասում ա ու կամաց Տուտի ղուշը թոցընում, կոնըտակն ա դնում ու տուս ա կյալի, քյնում ա իրան տուն։

Խաբարը քյնում ա թաքավորին, թե վազիրը էս մի հետս էլ աղջկանդ խոսացրեց։ Էս տղի դուս քյնալուց ետը, էս աղջիկը մնում ա ըրմացած, որ իրան ստոլը էս ղայդի խոսալը մանալիս ա լըմ ու ինքը բեխաբար։ Դռները միջի ղուլիցը փակում ա ու կյալիս ստոլի կշտին նստում ու ասում. «Պարի ռիկուն քե, ստոլ ախպեր»։ Ստուլը էլի ջուղաբ չի տալի։ Մնել ա ասում. որ տենում ա ծեն-ծըպ-տուն չկա հա՜, կըղնվում ա ու էս ստոլը խուրդըխաշ ա անում ու բնդի վե ածում, ասում ա. «Դե՜, քյնա՜ հմի խոսի»։ Ստով խաբարը զարկում ա վազրին ասում ա. «Վար իրեք անքամ էլ, թե խոսացրել ես՝ էնա քու ախպորը կառնեմ, թե հու չէ՝ կլուխդ կտրել կտամ»։

Վազիրը էս որ մանում ա, ասում ա. «Բաշուստի, էքուց ռիկու կկյամ, թե կրացի խոսացրի, հու էննա լավ, թե հու չէ՝ իմ կլուխը բե հալալ ա»։

Էքսի օրը էս վազիրս Տուտի ղուշը էլեդ վի ա ունում ու քյնում թաքավորի աղջկա տուն։ Լհե օթախի տուռը պա՜ց անում չի՜ մտնում, տենում ա էլեդ օթախը փարդով կեսիցը կտրած, էրեկվա ստուլը ճարթած-փշրած՝ դեն ածած. տենում ա բեն օթախի քունջը մի սանդուխ կա դրած, կամաց թաքուն Տուտի ղուշը քցում ա սանդուխի տակը ու ասում ա. «Պարի ռիկուն քե, սանդուխ ախպեր»։ Էս սանդուխը, ասում ա. «Ա՜յ ասծու պարին քե, վազիր ախպեր, պա՜ըով հաղար պարին ես եկել, համեցեք նստի մի քիչ զյա՜փ անենք»։ Վազիրը ասում ա. «Սանդուխ ախպեր մի նաղըլ ասա անկանչ տնենք»։ Սանդուխը ասում ա. «Վազի՜ր ախպեր, դու ասա, ես կարալ չեմ, վախում եմ՝ ստոլ ախպոր օյինը կլխիս կյա՜»։

Վազիրն ասում ա. «Լա՜վ, ես կասեմ սանդուխ ախպեր, անկանչ արա։ Մի թաքավոր ա լըմ, մի շատ սիրուն աղջիկ ա ունենըմ։ Էս աղջկա վրա սիրահարված են լըմ իրեք տղա. մինը վազիրի տղեն, մինը՝ վաքիլի տղեն, մինը էլ՝ մոլլի։ Էս աղջիկը իրեքին-իրեքին էլ ճոկ-ճոկ սիրելիս ա լըմ, կարում չի որին առնի, որին թողնի։ Թաքավորը իրան աղջկա էս հալը որ մանում ա հա՜, էն տղերանցը ասում ա. «Իրեքդ էլ իրար հետ վեր կացեք քյնացեք զարիպութին՝ աշխատանք արեք, մի խելի վախտից ետով որ ետ կյա՜ք, ձեզանից ով որ շատ աշխատանք արած լի, իմ աղջիկը նրա կտամ»։

Էս տղեքը էս որ մանում են հա՜, իրեքն էլ վի են կենում ու

ճանփա ընկնում դպա ղարիպութին՝ աշխատանքի։ Շատ քյնում եմ, քիչ, քյնում են մի ուրիշ ֆողի թաքավորի շհարը մը տուս են կյալի սհանք. վաղիրի տղեն քյնում ա էս թաքավորի վազիրի խոսքին նոքյար ա մտնում։

Վաքիլի տղեն էլ վաքիլի կշտին ա նոքյար մտնում. մոլլի տղեն էլ մոլլի ա նոքյար մտնում ու սկսում են ղուլլուղ անիլ ու փող ըշխատիլ։ Սհենց սհանք շատ են աշխատում, թե քիչ՝ մի մուտաթից հետով միտքները փոխվում ա, խոսքը մին են անում ու ետ են դառնում, թե կյան իրանց տուն։

Էս վազիրի տղեն, որ իրան հաշիվը վերջըցնում ա վազիրի հետ հա՛, վազիրը սրա տոնլուղը տալուցը ետը էս տղին ասում ա. «Տու լավ տղա ես», մի խնձոր ա տալի ու ասում ա. «Էս խնձորը անմահական խնձոր ա, որ ինչ ղայդի մեռած մարթի քթին էլ մոտացնես հա՛ սհաթը կսղանա, տու լավ տղա ես, հալալ նոքարութին արիր, վե կալ՝ էդ քեղ լի. հալբաթ քեղ պետքը կկյա մի տեղ»։

Վաքիլի տղեն էլ իրան հաշիվն ա վերջըցնում, իրան տոնլուղը չիմ առնում պրծնում, վաքիլը սրան մի խալիչա ու մի ճիպոտ ա փեշքեշ անում, ասում ա. «Տու լավ տղա ես, ես քեղանից շատ շնորհակալ եմ, լավ իր ղուլուղ անում ինձ։ Էս խալըշեն.—ասում ա,—էն ղայդի հունար ունի, որ պանաս, թե որ ուզենալիս լես հեռու տեղ քյնալ, վրեն կնստես ճիպոտով կտաս թե չէ՝ սհաթը քե կթրցնի կտանի ուզած տեղը կհասցնի։ Վեր կալ, քեզ լի, հալբաթ ղետկը կկյա մի տեղ»։

Մոլլի տղեն էլ իրան հաշիվն ա վերջըցնում իրան խազեինի հետ. վերջը էս մոլլեն էլ սրան մի դիրք ա փեշքեշ անում, ասում ա. «Սա էն ղայդի գիրք ա, որ ինչ որ ուզենաս իմանաս, էս գիրքը պաց անես թե չէ՝ ծեռաց կիմանաս ուզածդ։ Տու լավ տղա ես. ինձ շատ լավութին արիր,—ասում ա,—վեր կալ, քեզ փեշքեշ լի»։

Սա էլ էս դիրքը վեր ա ունում ու կյալի իրան հնկերների հետ հաղրվում են ու ճամփա են ընկնում դպա իրանց շհարը։ Շատ են կյալի, թե քիչ՝ էտ էլ աստոծ ա խաբար, կյալիս են մի տեղ նստում են, որ ղինչանան։ Ըստեղ իրար հետ գյափ անելիս մինը ասում ա. «Ցարաբ թաքավորի աղջիկը հմի ինչ պանի ա, յարաբ ըսկի մըտքով էլա անց կկենա՝ մենք քյնում ենք իրանց կուշտը»։ Տհենց ասելեն էս մոլլի տղեն ասում ա. «Ես կիմանամ, թե թաքավորի աղջիկը հմի ի՞նչ պանի ա»։ Սհաթը գիրքը պաց ա անում, մտիկ ա անում ու ասում ա. «Տղե՛րք, ծեր տունը չքանդվի թաքավորի աղջիկը էս սհաթիս ֆոքու վրա ա. հմի ա՝ ֆոքին կտա, մի քիչ ետով

ա ֆոքին կտա»։ Էս վազիրի տղեն ասըմ ա. «Ա՜խ, ափսոս էրնակ կլի էս սհաթիս ես ընտեղ լեմ, ծեռաց կսաղցընեմ»։

Վաքիլի տղեն էս որ մանըմ հա , ասըմ ա. «Տու որ կարող ես սղըցնել, ես էլ կարող եմ ծեզ էս սհաթիս թաքավորի աղչկա կուշտը հասցնել»։ Ասըմ ա ու խալիչեն փռում ա, սհանք իրեբով նըստում են, խալիչեն սհանց վե ա ունում ու թրցնըմ աւ Սհանք վիրեվիցը մտիկ են անըմ, տենըմ են, որ աղչկա դուռը խալիքը կտրած։ Էս տղերքը, որ տենըմ չե՞ն՝ նի են մտնըմ, տենըմ են աղչիկը էնա հա՛ ֆուքին տալու վրա ա։ Վազիրի տղեն անմահական խնձորը տալիս ա քնթին՝ լավանում ա։

Տղերքը սկսում են կռիվ քցել, թե ո՞ւմն ա աղչիկը։ Վալիրի տղեն ասըմ ա. «Ես իմ խնձորս թաքավորի աղչկա քթին չմոտացնեի, դուք ինչ տեիք անել. ինձ կհասնի»։ Նա ասըմ ա՝ ինձ կհասնի։ Մեկելն ասըմ ա՝ ինձ։ Հմի քեզ եմ հարցնում՝ սանդուխ ախպեր. էն աղչիկը ո՞ւմը կհասնի։

Սանդուխը ասըմ ա. «Մոլլի տղին կհասներ, նա առաչ մացավ թաքավորի աղչկա հիվանդութինը»։

Վազիրը ասըմ ա. «Չէ՛, սանդուխ ախպեր, վաքիլի տղին կհասներ, նա պերուց տեղ հասցուց»։ Սհենց էս սանդուղը և վազիրը խոսըմ ին, նա ասըմ ա՝ նրան կհասներ, նա ասըմ ա՝ չէ՛. մեկելին կհասներ, էս աղչկա սիրտը փարդու տակին քիչ ա մնըմ. թե տրաքի։ Որ շատ համփերութինը կտրում ա հա՛, փարղու տակիցը էլեդ բղավում ա. «Ի՞նչ եք իրար ռեխ կրծըմ,—ասըմ ա,—էն աղչիկը հալբաթ քի վազիրի տղին կհասներ, որ նրա խնձորը չեր. թաքավորի աղչիկը ո՞նց տեր սղանալ»։

Վազիրը էս մանալուն հադաղ ասըմ ա. «Է՛, թաքավորի աղչիկ, թե որ էն աղչիկը էն վեզիրի տղին ա, տու էլ իմ ախպորը կհասնես»։

Թաքավորը լսըմ ա, ուրախանըմ, որ իր վազիրը խոսացրել ա աղչկան։ Ծեռաց սհանք պերում են, լավ-լազաթին վեզիրի ախպոր վրա աղչկանը պսակում են։ Հրսանիքից ետով էս թաքավորը պերըմ ա իրան աղչկանը բոլ պաճինք, ապրանք, դովլաթ տալի ու էս էրկու ախպորն էլ, իրան աղչկանն էլ ճանփու ա դնըմ դպա հոր կուշտը։

Սհանք կյալիս են, կյալիս հասնըմ են էն տեղը, որտեղ սհանք քյնալիս ծերքին իրար են պտահել ու ախպերացել են։ Ըստի սհանք էլետ վեր են կյալի, դինչանըմ են, ետով էս մենձ ախպերը պուճուրին ասըմ ա. «Ախպեր ջա՛ն, ես ըստիան ուղում եմ քեղա-

ից պժանվեմ, դպա իմ տուն քյնամ, արի, ինչ որ ըշխատել ենք՝ հալալ կես աննենք, դու բու փայր վե կալ, քու ճամփեն քյնա, ես իմր վե կալեմ՝ իմ ճամփեն քյնամ»։

Պուճուր ախպերը ասում ա. «Ի՞նչ ուզում ես, արա»։ Մենձ ախպերը պերում ա ինչ ունեն՝ կիսում ա ու ասում. «Հմի էլ աղչկան աննը կիսիլ. Թրով կես աննենք»։ Պուճուր ախպերն ասում ա. «Տհենց ո՞նց կլի»։ Մենձը ասում ա. «Չէ՛, որ չէ»։ Մենձ ախպերը աղչկանը կասլում ա, Թուրը պցրացնում, աղջիկը վախենում ա՝ բերանից մի մենձ ոց ա կլալիս, ախպերն ասում ա. «Էս օցն էր, որ էսրան մարթիկ ա կատրել ավելա»։ Նառվ նրանց ճանփու ա անում, իրան ծիծիկի մատը կտրում մի շիշ արուն ա տալի ախպորը. «Տար,—ասում ա,—բու հոր աչքերին բսի, ղաց լի, ես էն կարմիր ծուկն եմ, ինչ որ Թոչիրը հանեցին, դու էլ ինձ ծովը բցեցիր»։ Ասում ա ու տղի աչրիցը սհաթը ենմիշ ա լըմ, էս աղեն մրնում ա տենում ա, որ էլ մարթ չկա։ Վե ա կենում էս աղչկա ու հարստութենի հետ կլալիս։ Հոր մոտ։ Տղեն կլալուց հաղաղ արնիցը բսում ա հոր աչքերը պացրում։ Օխտը օր, օխտը բշեր հրսանիր ա անում, իրան տղին էլ շինում ա Թարավոր, ասում ա. «Ես ղոռավել եմ, հմիկանց դենը տու Թարավորութին արա»։

Խերը բստի, շասը ընդի։

Ասծանից իրեր խնձոր վե կլա. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալսամ աշխարրին։